« 08 » ապրիլ 2025թ. No 2119 - Ա

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ ԱՐԴԻ ՀԱՐՑԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ, ընդհանուր ստոմատոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 116 տեսական և 59 գործնական կրեդիտ. դասավանդողներ Գայանե Նարիմանյանին՝ ՇՄՋ 15 տեսական և 20 գործնական կրեդիտ, Մարինա Դանիելյանին՝ ՇՄՋ 26 տեսական և 9 գործնական կրեդիտ, Մեսրոպ Մեսրոպյանին՝ ՇՄՋ 4 տեսական և 6 գործնական կրեդիտ, Լուսինե Մուրադյանին՝ ՇՄՋ 14 տեսական և 6 գործնական կրեդիտ, Հայկ Սարգսյանին՝ ՇՄՋ 35 տեսական կրեդիտ, Անահիտ Մկրտչյանին՝ ՇՄՋ 10 տեսական և 12 գործնական կրեդիտ, Արսեն Մանուկյանին՝ ՇՄՋ 12 տեսական և 6 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 091340184

Շաբաթ 1		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Լրիվ անատամություն: Լրիվ շարժական պրոթեզների պատրաստումը 5 այցով: Կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Պատասխանատու դասախոսի անմիջական հսկողությամբ ստանալ ֆունկցիոնալ դրոշմներ անատամ ծնոտների պրոթեզավորման համար: Ակրիլային պրոթեզների կիրառման ցուցումների, հակացուցումների քննարկում, կլինիկական դեպքերի վերլուծություն	Գայանե Նարիմանյան
Օր 2		
5 ժամ	**Դասախոսություն** Սոմատիկ հիվանդությունների կլինիկական դրսևորումները. ա) բերանի խոռոչի հիվանդություններ բ) սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ գ) շնչառական ուղիների հիվանդություններ	Մարինա Դանիելյան

	գ) ստամոքս-աղիքային ուղու հիվանդություններ ե) արյան հիվանդություններ զ) էնդոկրին հիվանդություններ է) դեղապատրաստուկների հանդեպ ռեակցիաներ	
Օր 3		
5 ժամ	**Դասախոսություն** Ստոմատոլոգիական օգնության կազմակերպում: Ստոմ. պացիենտի բժշկական քարտի լրացում, բուժման պլանի կազմում	Լուսինե Մուրադյան
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Միջդիսցիպլինար համագործակցություն: Ուղղահայաց հարթության մեջ տեղի վերականգնում օրթոդոնտիկ ճանապարհով	Հայկ Սարգսյան
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Բերանի խոռոչի լորձաթաղանթի ախտահարումները մանկական տարիքում (սուր հերպետիկ ստոմատիտ, մանկական վիրուսային հիվանդություններ, սնկային ախտահարումներ)	Անահիտ Մկրտչյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական դեպքերի քննարկում կապված ախտորոշման և բուժման եղանակների հետ	Լուսինե Մուրադյան
Շաբաթ 2		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Մասնակի անատամության դասակարգումը: Մասնակի թիթեղային պրոթեզներ: Պրոթեզների ժամանակակից տեսակները, կլինկա-լաբորատոր փուլերը: Աղեղային պրոթեզավորում, դիզայն, ֆիքսացիայի տեսակները, կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով: Մասնակի շարժական պրոթեզների ժամանակակից ձևերի (նեյլոնային, ակրիլային, Acry Free, կվադրոտի, սենդվիչ-պրոթեզների) կիրառման ցուցումների, հակացուցումների, առավելությունների և թերությունների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 2		
5 ժամ	**Դասախոսություն** Բերանի խոռոչի նախաքաղցկեղային վիճակներ. տափակբջջային քաղցկեղ. բերանի խոռոչի քաղցկեղի և	Մարինա Դանիելյան

	նախաքաղցկեղային վիճակների կլինիկական տարբեր դրսևորումները ա) ռիսկի գործոնները բ) ախտորոշումը	
Օր 3		
5 ժամ	**Դասախոսություն** Միջդիսցիպլինար համագործակցություն: Կողմնային կտրիչների ադենցիա	Հայկ Սարգսյան
Օր 4		
2 ժամ	**Դասախոսություն** Կարիեսի և դրա բարդությունների ախտորոշման, բուժման առանձնահատկությունները երեխաների մոտ	Անահիտ Մկրտչյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական դեպքերի քննարկում՝ համապատասխան մեկնաբանություններով	Անահիտ Մկրտչյան
Օր 5		
2 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամանակակից եղանակներով	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Մասնակի շարժական պրոթեզների ժամանակակից ձևերի (նեյլոնային, ակրիլային, Acry Free, կվադրոտի, սենդվիչ-պրոթեզների) կիրառման ցուցումների, հակացուցումների, առավելությունների և թերությունների քննարկում	Գայանե Նարիմանյան
Շաբաթ 3		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Ատամների ախտաբանական մաշվածություն. դասակարգումը, բուժման մեթոդները: Ատամների շինավորում	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Սլայդների օգնությամբ տարբեր կլինիկական դեպքերի և բուժման եղանակների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 2		
5 ժամ	**Դասախոսություն** Ինֆեկցիոն հիվանդություններ ա) հերպես առաջացնող վիրուսներ բ) ՄԻԱՎ գ) մարդու պապիլոմավիրուս, բերանի խոռոչի պապիլոմատոզ ախտահարում դ) բերանի խոռոչի սնկային ախտահարում	Մարինա Դանիելյան
Օր 3		
5 ժամ	**Դասախոսություն**	Արսեն Մանուկյան

	Վիրաբուժական բուժման մեթոդները դիմածնոտային շրջանի բորբոքային հիվանդությունների ժամանակ ամբուլատոր պայմաններում: Պերիոդոնտիտ, պերիոստիտ, օստեոմիելիտ, դեմքի և պարանոցի աբսցեսներ և ֆլեգմոնաներ: Լիմֆադենտիտ, լիմֆանգիտ, դեմքի և պարանոցի ադենոֆլեգմոնա	
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Միջդիսցիպլինար համագործակցություն: Ոսկրային հենքի ապահովում իմպլանտացիայի համար ատամի ուղղորդված տեղաշարժի միջոցով	Հայկ Սարգսյան
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Անզգայացումը մանկական ստոմատոլոգիայում: Ատամների հեռացման ցուցումներն ու հակացուցումները: Դիմածնոտային շրջանի օդոնտոգեն բորբոքային հիվանդությունների (պերիոստիտ, օստեոմիելիտ, աբսցես, ֆլեգմոնա) կլինիկական առանձնահատկությունները մանկական հասակում	Անահիտ Մկրտչյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական դեպքերի քննարկում կապված անզգայացման եղանակների և անզգայացնող նյութերի ընտրության հետ՝ ըստ տարիքի: Մանկական հասակում օդոնտոգեն բորբոքային հիվանդությունների վիրաբուժական բուժման եղանակների քննարկում	Անահիտ Մկրտչյան
Շաբաթ 4		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Կամրջաձև պրոթեզներ, հղկման ռանձնահատկությունները: Ցուցումներ և հակացուցումներ	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կամրջաձև պրոթեզների հենակետային ատամների ընտրությունը և հղկման սկզբունքները: Կլինիկական դեպքերի քննարկում թեմայի վերաբերյալ	Գայանե Նարիմանյան
Օր 2		
5 ժամ	**Դասախոսություն** Նյարդաբանական հիվանդություններ. դիմային ցավ ա) ցավի մեխանիզմը բ) նյարդաբանական հիվանդության, ցավի բնույթը գ) ատիպիկ դիմային ցավ դ) «այրվող բերանի» համախտանիշ ե) չարորակ ուռուցքի դեպքում ցավի տեղակայումը	Մարինա Դանիելյան
Օր 3		
5 ժամ	**Դասախոսություն**	Արսեն Մանուկյան

	Թքագեղձի հիվանդություններ և ախտահարումներ: Օդոնտոգեն հայմորիտ: Բերանի խոռոչի վիրաբուժություն: Օստեոպլաստիկա, ալվեոլոպլաստիկա, ֆրենէկտոմիա	
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Գնատոլոգիական տերմինոլոգիա: Սովորության օկլյուզիա: Կենտրոնական հարաբերություն: Օրթոդոնտիկ էլայներների կիրառումը: 3D պլանավորում	Հայկ Սարգսյան
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Ռենտգեն-ախտորոշում, համակարգչային շերտագրում	Մեսրոպ Մեսրոպյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական դեպքերի քննարկում կապված ռենտգեն ախտորոշման ժամանակակից տարբեր եղանակների հետ	Մեսրոպ Մեսրոպյան
Շաբաթ 5		
Օր 1		
5 ժամ	**Դասախոսություն** ՔՍԾՀ բիոմեխանիկա: Գնատոլոգիա	Գայանե Նարիմանյան
Օր 2		
2 ժամ	**Դասախոսություն** Կարիեսային ախտահարումների ախտորոշման, բուժման ժամանակակից սկզբունքները, ախտորոշման և բուժման սխալները և բարդությունները	Մարինա Դանիելյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Ատամների վերականգնումը ժամանակակից պլոմբանյութերով: Կարիոզ խոռոչի հղկման առանձնահատկությունները կապված վերականգնման տեսակի հետ: Ֆանտոմ ատամների վրա, անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ, կատարել կարծր հյուսվածքների մշակում, խոռոչների ձևավորում կապված վերականգնման տեսակի հետ: Կարիոզ խոռոչի ձևավորում ըստ դասերի (C ֆակտոր): Քննարկել կարիոզ խոռոչում դեղորայքային մշակման ժամանակակից նյութերը (Consepsis): Քննարկել և ցուցադրել ադհեզիվ ձևավորման առանձնահատկությունները: Ցուցադրել էսթետիկ վերականգնման համար նախատեսված գչիրների և աբռազիվ գործիքների հավաքածուն և դրանց օգտագործման տեխնիկան էսթետիկ վերականգնման յուրաքանչյուր փուլում: Ռետենցիոն սարքերի պարապուլպար պիների օգտագործման առանձնահատկությունների քննարկում էսթետիկ պլոմբավորման ժամանակ (Պիների ֆիքսացիա): էսթետիկ պլոմբավորման ժամանակ Masking Agent–ի, 3M ESPF-ի օգտագործման եղանակների, ռեստավրացիոն	Մարինա Դանիելյան

	համակարգի, 3M ESPF-ի նյութերի և դրանց կիրառման ոլորտի քննարկումը: Ատամների կարիոզ խոռոչների վերականգնման սենդվիչ-տեխնիկայի (փակ և բաց սենդվիչ) կիրառման ցուցումների և փուլերի քննարկում:	
Օր 3		
2 ժամ	**Դասախոսություն** Տեղային անզգայացման եղանակներ, սխալներն ու բարդությունները: Ստոմատոլոգիայում կիրառվող անզգայացնող միջոցներ: Հարակից հիվանդությունների ժամանակ անզգայացման ընտրություն և հիվանդի նախապատրաստում	Լուսինե Մուրադյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ կատարել տեղային անզգայացում (ինֆիլտրացիոն և հաղորդչական): Անցկացնել կլինիկական դեպքերի քննարկում կապված տեղային անզգայացման բարդությունների և դրանց վերացման հետ	Արսեն Մանուկյան
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Վաղաժամ օրթոդոնտիկ բուժում: Կանխարգելիչ միջոցառումներ և բուժում վաղ կաթնատամնային կծվածքում:	Հայկ Սարգսյան
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Սմոտատոլոգիական հիվանդությունների կանխարգելման առանձնահատկությունները տարբեր տարիքային խմբերում: Հերմետիկներ, ֆիսուրների հերմետիզացիա, ռեմիներալիզացիոն թերապիա	Անահիտ Մկրտչյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ կատարել ժամանակակից հերմետիկներով ֆիսուրների հերմետիզացիա և ռեմ. թերապիա: Կարիեսի կանխարգելման նպատակով ֆիսուրների հերմետիկների կիրառման ցուցումների քննարկում	Անահիտ Մկրտչյան
Շաբաթ 6		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Արհեստական շապիկների դասակարգում: Ատամների հղկման առանձնահատկությունները: Մետաղ-կերամիկական, կերամիկական շապիկներ: Հղկման և ֆիքսացիայի առանձնահատկությունները, կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների	Գայանե Նարիմանյան

	պսակային հատվածների հղկում ժամակակից եղանակներով	
Օր 2		
2 ժամ	**Դասախոսություն** Արմատախողովակի մշակման առանձնահատկությունները (գործիքային և դեղորայքային)	Մարինա Դանիելյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Ծանոթացնել ժամանակակից էնդոդոնտիկ գործիքներին և էնդոդոնտիկ ծայրակալին: Ֆանտոմ ատամների վրա ցուցադրել էնդոդոնտիկ ծայրակալի և յուրաքանչյուր էնդոդոնտիկ գործիքի օգտագործման ճիշտ եղանակը էնդոդոնտիկ բուժման համապատասխան փուլում	Մարինա Դանիելյան
Օր 3		
2 ժամ	**Դասախոսություն** Ատամների հեռացման վիրահատություն: Ցուցումները, հակացուցումները: Ընդհանուր և տեղային բարդություններն ատամների հեռացման ժամանակ և հեռացումից հետո	Արսեն Մանուկյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Անցկացնել կլինիկական դեպքերի քննարկում ատամների հեռացման ժամանակ և հեռացումից հետո տեղային և ընդհանուր բարդությունների կանխարգելման և վերացման վերաբերյալ	Արսեն Մանուկյան
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Ֆունկցիոնալ սարքերի կիրառումն օրթոդոնտիայում: Ֆրենկելի մեթոդ: Դասական մոնոբլոկ սարքեր	Հայկ Սարգսյան
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Կարիեսային ախտահարումներ: Ախտորոշում, բուժման ժամանակակից սկզբունքներ, ախտորոշման և բուժման սխալներն ու բարդությունները մանկական ստոմատոլոգիայում	Անահիտ Մկրտչյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Քննարկել կարիոզ խոռոչի հղկման առանձնահատկութունները երեխաների մոտ, պլոմբանյութի ընտրությունը: ART-եղանակի կիրառումը մանկական ստոմատոլոգիայում: Ապակե իոնոմերային ցեմենտների և կոմպոմերների օգտագործման ցուցումների քննարկում մանկական ստոմատոլոգիայում	Անահիտ Մկրտչյան
Շաբաթ 7		
Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Ֆրոնտալ ատամների ադհեզիվ վերականգնում: Ներդիրներ, վինիրներ, ծայրատային գամիկավոր կոնստրուկցիաներ	Մեսրոպ Մեսրոպյան

3 ժամ	**Գործնական աշխատանք** Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների արմատախողովակների մշակում և պատրաստում գամիկներով ատամնաշապիկների համար ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով միկրոպրոթեզների պատրաստման համար: Ռեֆրակտորներ (լյումիներներ, ուլտրավինիրների) կիրառման քննարկում CAD/CAM տեխնոլոգիայով պսակների ներդիրների գամիկների վինիրների պատրաստման փուլերի քննարկում	Մեսրոպ Մեսրոպյան
Օր 2		
2 ժամ	**Դասախոսություն** Արմատախողովակի օբտուրացիայի ժամանակակից մեթոդները և նյութերը: Էնդոդոնտիկ բուժման սխալներն ու բարդությունները և դրանց վերացումը	Մարինա Դանիելյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Ֆանտոմ ատամների վրա, պատասխանատու դասախոսի հսկողությամբ, իրականացնել արմատախողովակների օբտուրացիա ժամանակակից եղանակներով (լատերային կոնդենսացիա, թերմոֆիլով լիցքավորում): Սլայդների օգնությամբ կլինիկական դեպքերի քննարկում կապված էնդոդոնտիկ բուժման սխալների և բարդությունների հետ: Հետլիցքային ցավերի առաջացման պատճառները և դրանց վերացման ուղիների քննարկում	Մարինա Դանիելյան
Օր 3		
2 ժամ	**Դասախոսություն** Ստոմատոլագիայում կիրառվող դեղամիջոցները: Ասեպտիկան և անտիսեպտիկան ստոմատոլոգիայում	Լուսինե Մուրադյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Իրազեկել ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին անձնական, անհատական և աշխատանքային հիգիենայի կանոնների պահպանման և պահանջների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ-ում գործող համապատասխան օրենքների: Ներկայացնել ախտահանման ժամանակակից սարքավորումները, եղանակները և նյութերը	Լուսինե Մուրադյան
Օր 4		
5 ժամ	**Դասախոսություն** Ատամնաձնոտային անոմալիաների կանխարգելումը: Վեստիբուլյար թիթեղներ	Հայկ Սարգսյան
Օր 5		
5 ժամ	**Դասախոսություն** Ոչ կարիեսային ախտահարումներ: Ախտորոշման և բուժման ժամանակակից սկզբունքները մանկական ստոմատոլոգիայում	Լուսինե Մուրադյան